ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-20-Ը ՎՐԱՍՏԱՆ (Ք. ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Արևիկ Արզոյան

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Վրաստան, ք. Թբիլիսի, 2024 թվականի սեպտեմբերի 18-20

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Եվրոպական միություն (ԵՄ)

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Ճանաչողական այցի նպատակը՝

   -ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման մշտադիտարկման մեխանիզմի ներդնման շրջանակում ծանոթանալ Եվրոպական միության հետ ասոցացման մասին համաձայնագրի իրականացման մշտադիտարկման վրացական փորձին, ինչպես նաև կիրառվող մեթոդաբանությանն ու գործիքներին:

   -Բարելավել Հայաստանի փորձնական խմբի ներկայացուցչական գերատեսչությունների կարողությունները բարեփոխումների մշտադիտարկման գործընթացում:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Ճանաչողական այցի շրջանակներում քննարկվել են Վրաստանի տրանսպորտի և շրջակա միջավայրի ոլորտներում կիրառվող ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման մշտադիտարկման մեխանիզմները, փուլերը, ընթացակարգերը և գործիքները, ներառյալ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման գործընթացում օրենսդրական մոտարկումների հետ կապված հարցեր:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպումներ են կայացել Վրաստանի արտաքին գործերի նախարարության, Վրաստանի խորհրդարանին առընթեր ԵՄ ինտեգրման հանձնաժողովի, Արդարադատության

նախարարության, Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության, Էկոնոմիկայի նախարարության, ԵՄ և ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնի, Ներքին գործերի նախարարության, Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության և Էներգետիկայի և ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Վերջիններիս կողմից ներկայացվել են ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի իրականացման մշտադիտարկման գործընթացում սեփական փորձն ու ռազմավարությունը: ՀՀ պատվիրակության ոլորտային ներկայացուցիչների կողմից հարցադրումներ են արվել՝ վրացական փորձի, կիրառվող գործիքների վերաբերյալ առավել խորը պատկերացում կազմելու, հայաստանյան փորձի հետ համադրելու նպատակով:

7. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Հաշվի առնելով այցի բնույթը, որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

Ձեռք են բերվել մի շարք բանավոր պայմանավորվածություններ վրացական կողմի հետ հետագա սերտ համագործակցություն ծավալելու շուրջ, ինչպես նաև Հայաստան փոխադարձ այցի հնարավորության վերաբերյալ:

8. <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>

Երկուստեք առաջարկներ են հնչել թեմայի շուրջ առավել խորը համագործակցություն ծավալելու վերաբերյալ:

9. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ</u>

26.09.2024թ.